


Տեղեկատվություն և ռեսուրսներ վարձակալների համար COVID-19-ի ընթացքում



Վտարումների ժամանակավոր դադարեցումը կավարտվի 2020 թ. հուլիսի 24-ին

ԵՔԵ ԿՈՐՑՐԵԼ ԵՔ ԶԵՐ ԵԿԱՄՈՒՏԸ,
ԱՆՄԻՋԱՊԵՍ ԽՈՍԵՔ ԶԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԵՏ՝
ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ



Կանխել վտարումը վարձավճարի չվճարման համար

➤ Հնարավոր է, որ ես վարձավճարը չվճարելու համար վտարման ծանուցում ստանամ 2020 թ. հուլիսի 24-ից հետո:

Այո: Եթե վտարման ավելի երկար մորատորիում չի կիրառվում՝ նահանգային կամ տեղական օրենսդրության համաձայն, սկսած 2020 թ. հուլիսի 25-ից, ձեր ՀԲԳ-ն կամ տանտերը կարող է ձեզ վտարման մասին ծանուցում տալ, եթե դուք չեք վճարել ձեր վարձավճարը կամ չեք կնքել մարման պայմանագիր: CARES ակտի համաձայն դաշնային օրենքը պահանջում է, որ մորատորիումի ավարտին տրված վտարման մասին ծանուցումը վարձակալին սեփականությունն ազատելու համար առնվազն 30 օր տրամադրի, բայց նահանգային կամ տեղական օրենսդրությամբ կարող է պահանջվել ծանուցման ավելի երկար ժամանակահատված: Եթե դուք ստանում եք վտարման վերաբերյալ ծանուցում, ապա պետք է հետևեք տեղական գործընթացին վտարման ընթացակարգերի համար: Եթե կարծում եք, որ ձեզ սխալմամբ են վտարել, դիմեք տեղական իրավաբանական աջակցության կազմակերպությանը կամ սոցիալական ծառայության գործակալություններին: Եթե դուք Վաուչերային ծրագրի մասնակից եք, ապա կարող եք դիմել նաև ձեր տեղական ՀԲԳ-ին: Եթե դուք հանրային բնակարանային ծրագրի մասնակից եք, այդ դեպքում բողոքարկելու իրավունք ունեք, ինչպես նշված է ձեր վարձակալության պայմանագրում:

➤ Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի չենթարկվեմ վտարմանը՝ չվճարված վարձավճարի դեպքում:

Վարձավճարը պետք է դեռ ավելանար և կուտակվեր չվճարված լինելու դեպքում: Եթե ունեք չվճարված վարձավճար, անմիջապես խոսեք ձեր ՀԲԳ-ի հետ ստորև նշված հնարավոր տարբերակների մասին.

- (1) Եթե ունեցել եք եկամտի **նվազում կամ հանգամանքների փոփոխություն**, որը դժվարացրել է ձեր վարձավճարի ժամանակին վճարումը, ապա խնդրեք ձեր ՀԲԳ-ին վերաձևակերպել ձեր եկամուտը:
- ✓ Ե՛վ հանրային բնակարանային ծրագրի մասնակիցների, և՛ Վաուչերային ծրագրի մասնակիցների համար ՀԲԳ-ն կվերանայի ձեր ընթացիկ եկամուտը և կճշգրտի ձեր վարձավճարի չափը՝ արտացոլելու այդ փոփոխությունը:
 - **Հուշում!**: Եթե եկամտի փոփոխությունն անհապաղ չի հաղորդվել, դիմեք ՀԲԳ-ին՝ ետադարձ ուժի կիրառման միջոցով վարձավճարների ճշգրտման իրենց քաղաքականության վերաբերյալ (ոմանք դա թույլ են տալիս, ոմանք՝ ոչ):
 - ✓ Դուք կարող եք նաև հարցնել ՀԲԳ-ին՝ արդյոք իրավասու եք վարձավճարների նվազագույն արտոնությունից օգտվելու համար: Բոլոր ՀԲԳ-ները պարտավոր են տրամադրել վարձավճարների նվազագույն արտոնություններ: Դուք կարող եք վերանայել ՀԲԳ-ի ընդունելության և շարունակական զբաղվածության քաղաքականությունը (ԸՇՁՔ) կամ Վարչական ծրագիրը ՀԲԳ-ի դժվարությունների առաջացման կապակցությամբ նպաստների տեղական քաղաքականության մասին կամ կարող եք անմիջապես դիմել ՀԲԳ-ին:
- (2) Հանրային բնակարանային ապահովման ծրագրի բոլոր մասնակիցները և Վաուչերային ծրագրի մասնակիցները հնարավորություն ունեն վճարել վերադարձման վարձը միանվագ գումարով մինչև 2020 թ. հուլիսի 24-ը: Ձեր ՀԲԳ-ն և տանտերը չեն կարող գանձել վարձավճարներ կամ վարձավճարի տոկոսագումար վճարումն ուշացնելու համար, որը նախատեսված էր 2020 թ. ապրիլ, մայիս, հունիս և հուլիս ամիսների համար:
- (3) Եթե չկարողանաք միանվագ գումարով վճարել հետ վերադարձվող վարձավճարը, հարցրեք ձեր ՀԲԳ-ին կամ ձեր տանտիրոջը (եթե դուք Վաուչերային ծրագրի մասնակից եք), արդյոք կարող եք կնքել **մարման պայմանագիր** ցանկացած չվճարված վարձավճարի համար: *Տե՛ս ստորև՝ մարման պայմանագրերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ իմանալու համար:*
- **Հուշում!**: 1200 ԱՄՆ դոլար + դաշնային տնտեսական ազդեցության հետ կապված վճարումը (խթանիչ վճար) ներառված ՉԷՐ ձեր եկամտի հաշվարկման մեջ: Դա կարող է օգտագործվել որպես ռեսուրս՝ օգնելու մարել չվճարված վարձավճարը: Գրեթե բոլոր բնակիչները, ովքեր ԱՄՆ քաղաքացիներ են, իրավասու են այս վճարման համար: Եթե դուք չեք ստացել խթանիչ վճար, ապա այցելեք հետևյալ ինտերնետային էջը՝ ձեր վճարման կարգավիճակն ստուգելու և պարզ ձևաթուղթ լրացնելու համար՝ <https://www.irs.gov/coronavirus/get-my-payment>:
 - **Հուշում!**: Ձեր եկամտի հաշվարկման մեջ ներառված ՉԷ CARES-ի ակտով նախատեսված ժամանակավոր գործազրկության նպաստների շաբաթական լրացուցիչ 600 ԱՄՆ դոլարը: Եթե դուք ստացել եք այս լրացուցիչ նպաստը, ապա դա կարող է օգտագործվել որպես չվճարված վարձավճարի օգնության միջոց: Եթե կորցրել եք աշխատանքը և դեռ չեք դիմել գործազրկության նպաստի համար, ապա կարող եք մանրամասն տեղեկատվություն գտնել այն մասին, թե ինչպես դիմել գործազրկության նպաստի համար այցելելով՝ www.usa.gov/unemployment; www.careeronestop.org/LocalHelp/UnemploymentBenefits: Նշում. CARES-ի ակտով նախատեսված շաբաթական լրացուցիչ 600 ԱՄՆ դոլարի չափով գործազրկության ժամանակավոր նպաստի ժամկետը լրանում է 2020 թ. հուլիսի 31-ին, և եթե հիմա դիմեք, այն չի ապահովի այդ լրացուցիչ վճարման նպաստը, բայց դուք դեռ կարող եք իրավասու լինել գործազրկության կանոնավոր ապահովագրության համար:
- (4) Ձեր ՀԲԳ-ն կարող է իմանալ **տեղական ռեսուրսների մասին**՝ օգնելու վարձավճարների, կոմունալ վարձավճարների և այլ հիմնական կարիքների հարցերում:
- Կարող եք նաև զանգահարել 211 ցանկացած հեռախոսից կամ այցելել 211.org՝ շտապ ֆինանսական օգնության վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար: Նաև տե՛ս սույն

փաստաթղթի վերջում առկա ծառայությունների և ռեսուրսների բաժինը հնարավոր ռեսուրսների ցուցակի համար:

➤ **Ի՞նչ է մարման պայմանագիրը, և որո՞նք են վտարումից խուսափելու պայմանները:**

Մարման պայմանագիրը գրավոր և կնքված պայմանագիր է ձեր և ՀԲԳ-ի (Հանրային բնակարանային ծրագրի մասնակիցների) կամ ձեր տանտիրոջ (Վաուչերային ծրագրի մասնակիցների) միջև, որը սահմանում է այն գումարը, որը դեռ չեք վճարել, և պայմանագիր է այն մասին, թե ինչքան կվճարեք յուրաքանչյուր ամիս և քանի ամսվա ընթացքում (օրինակ՝ դուք պարտք եք 500 ԱՄՆ դոլար և համաձայն եք, որ հավելյալ 50 ԱՄՆ դոլար կվճարեք, սովորական վարձավճարից բացի յուրաքանչյուր ամիս՝ 10 ամսվա ընթացքում): Մարման պայմանագիր կնքելը կլինի ՀԲԳ-ի կամ տանտիրոջ հայեցողությամբ: Մարման պայմանագրի ուշացրած և բաց թողնված վճարումները կարող են հանգեցնել վարձակալության և (կամ) օժանդակության դադարեցմանը: Հանրային բնակարանային ծրագրի մասնակիցների համար մարման պայմանագրի պայմանները կներկայացվեն ՀԲԳ-ի ընդունման և շարունակական զբաղվածության քաղաքականությունում (ԸԾԶՔ) և գրավոր մարման պայմանագրում: Վաուչերային ծրագրի մասնակիցները պետք է անմիջապես բանակցեն ձեր տանտիրոջ հետ՝ մարման պայմանագրի պայմանները որոշելու համար:



COVID-19-ի մասին տեղեկատվություն և անվտանգության մտահոգություններ

➤ **Ի՞նչ պետք է անեմ, եթե ինձ մոտ հաստատվել է COVID-19-ը:**

Ձեր ՀԲԳ-ն կարող է խնդրել ձեզ զեկույց ներկայացնել, եթե ձեզ մոտ հաստատվել է այն կամ շփվում եք որևէ մեկի հետ, ում մոտ այն հաստատվել է՝ օգնելով պաշտպանել այլ վարձակալներին և աշխատողներին: Դուք պարտավոր չեք հայտնել ձեր ՀԲԳ-ին կամ տանտիրոջը ախտորոշման մասին: Այնուամենայնիվ, սույն տեղեկատվության տրամադրումը կարող է օգնել պաշտպանել անձնակազմին և այլ մարդկանց, որոնց հետ դուք շփվել եք:

➤ **Ես իրավո՞ւնք ունեմ իմանալու, արդյոք մյուս վարձակալների մոտ հաստատվել է COVID-19-ը:**

Ձեր ՀԲԳ-ն չպետք է ձեզ տեղեկացնի COVID-19-ի ակտիվ դեպքերի մասին: Այնուամենայնիվ, որոշ ՀԲԳ-ներ կարող են տեղեկացնել վարձակալներին, եթե իրենց շենքում ինչ-որ մեկի մոտ հաստատվել է COVID-19-ը:

➤ **Ի՞նչ անել, եթե ես հարցեր կամ մտահոգություններ ունեմ գույքի կառավարման և պահպանման վերաբերյալ:**

Դուք պետք է կապվեք ձեր ՀԲԳ-ի կամ տանտիրոջ հետ՝ գույքի կառավարման և պահպանման հարցումների վերաբերյալ մտավախություններով: Ոչ շտապ մտահոգությունների կամ հարցումների պատասխանները կարող են սահմանափակվել կամ հետաձգվել: Որոշ ՀԲԳ-ներ ֆիզիկապես փակել են իրենց գրասենյակները՝ COVID-19-ի տարածումը նվազեցնելու համար, բայց հասանելի են հեռախոսով, էլ. փոստով կամ իրենց առցանց պորտալով: Որոշ գրասենյակներ կարող են կրճատած լինել անձանց տրամադրվող աջակցությունը և (կամ) կարող են արձագանքել միայն արտակարգ իրավիճակներին: Ստուգեք, արդյոք ձեր շենքում կամ գույքի կառավարման գրասենյակում փակցված են թռուցիկներ կամ հաղորդագրություններ իրենց մանրամասն տեղեկություններով:

➤ **Արդյոք ՅԲԳ-ն պարտավոր է մասնագիտացված կերպով մաքրել իմ առանձնաբաժինը, եթե իմ շենքում կա(ն) վարակված անհատ(ներ):**

Ոչ, ՅԲԳ-ն պատասխանատու է ընդհանուր տարածքների մաքրման համար, իսկ դուք պատասխանատու եք ձեր առանձնաբաժնի համար:

➤ **Ինչպե՞ս կարող է Ռեզիդենտների հարցերով զբաղվող խորհուրդն աջակցել վարձակալներին այս ընթացքում:**

Ռեզիդենտների հարցերով զբաղվող խորհուրդները կարող են աջակցել COVID-19-ի հետ կապված բոլոր ջանքերին՝ տեղական գործակալությունների հետ համագործակցելով՝ COVID-19-ի գործողություններին և այլ հարցերի վերաբերյալ բնակիչներին ուսուցում և ռեսուրսներ տրամադրելու, հետազոտություններ անցկացնելու և ռեզիդենտների ներդրումներ հավաքելու համար, որոնք հարկավոր է բարձրացնել ՅԲԳ-ի առջև՝ միասին կազմելով տեղական ռեսուրսների մասին ցուցակ: Ռեզիդենտների հարցերով զբաղվող խորհուրդները կարող են նաև վարձակալության մասնակցության ֆոնդեր օգտագործել՝ տեսահամաժողովի տեխնոլոգիայի բաժանորդագրության գնման համար (օրինակ՝ Zoom) վիրտուալ հանդիպումների, դասընթացների և զանգվածային տեքստային հաղորդագրության ծառայություն անցկացնելու միջոցով կարևոր տեղեկատվություն հաղորդելու համար (օրինակ՝ Twilio, Simpletexting կամ eztexting):

➤ **Ի՞նչ անել, եթե ես COVID-19-ի պատճառով չեմ կարողանա բավարարել Համայնքային ծառայության և ինքնաապահովման պահանջը (CSSR) հանրային բնակարանաշինության ծրագրի համար:**

CSSR-ն ընդգրկում է միայն հանրային բնակարանային ծրագրի մասնակիցներին, այլ ոչ Վաուչերային ծրագրի մասնակիցներին: Ձեր ՅԲԳ-ն կարող է հրաժարվել է COVID-19-ի համայնքային ծառայության պահանջից: Հարցրեք, թե արդյոք ձեր ՅԲԳ-ն հրաժարվել է պահանջից և կապվեք ձեր ՅԲԳ-ի ռեզիդենտների հարցերով զբաղվող ծառայությունների աշխատակիցների կամ ծառայության համակարգողների հետ, որպեսզի օգնեն՝ գտնելու և ուղղորդում տալու համայնքային ծառայության և ինքնաապահովման գործողությունների համապատասխանության հարցում:

➤ **Կարո՞ղ եմ պահանջել, որ նախքան իմ առանձնաբաժին մուտք գործելը տեսուչները կրեն անձնական պաշտպանիչ պարագաներ (ԱՊՊ):**

Այո, եթե անհանգստացած եք, որ ՅԲԳ-ի անձնակազմը մուտք է գործում ձեր տուն առանց ԱՊՊ-ի, ինչպիսին է դեմքը ծածկող հարմարանքը կամ դիմակը, խնդրում ենք դիմել ՅԲԳ-ի աշխատակիցներին՝ ասելով, որ նրանք պետք է հետևեն նախագային կամ տեղական առողջապահական պաշտոնյաներից ստացված Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի ուղեցույցներին և առաջարկություններին:



Պաշտպանություն ընտանեկան և սեռական բռնությունից

➤ **Ի՞նչ է VAWA-ն: Արդյոք պաշտպանված եմ VAWA-ի ներքո:**

- «Բռնություն ընդդեմ կանանց» մասին օրենքը (VAWA) ապահովում է պաշտպանություն ընտանեկան բռնության զոհերի, ժամադրության ընթացքում առաջացած բռնության, սեռական

ոտնձգությունների և հետապնդումների զոհերի համար (այսուհետ՝ «VAWA հանցագործություններ»):

- Պաշտպանությունը հասանելի է անկախ սեռից:

➤ **Իմ VAWA պաշտպանությունը փոխվե՞լ է COVID-19-ի կարանտինի պատճառով:**

- Ոչ, եթե VAWA-ի հանցագործության զոհ եք, ձեր պաշտպանությունը մնում է նույնը COVID-19-ի ընթացքում: Ձեզ չեն կարող զրկել օգնությունից կամ օգնությունը չի կարող դադարեցվել ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում առաջացած բռնության, սեռական ոտնձգությունների կամ հետապնդումների անմիջական արդյունքի հիման վրա:
- Բացի այդ, VAWA-ի հանցագործությունների զոհ լինելը չի կարող համարվել ձեր վարձակալության պայմանագրի լրջագույն կամ կրկնվող խախտում կամ ձեր օգնություն ցուցաբերելու, վարձակալության կամ բնակեցման պայմանագրի դադարեցման հիմնավոր պատճառ: Այնուամենայնիվ, ՅԲԳ-ն կամ սեփականատերը կգնահատի ամեն դեպքն առանձին, երբ առկա է այլ վարձակալների իրական և անմիջական սպառնալիք:

➤ **Ի՞նչ պետք է անեմ, եթե COVID-19-ի ընթացքում ոտնձգություններից խուսափելու համար անհրաժեշտ է տեղափոխվել:**

- Դուք առաջվա պես կարող եք պահանջել շտապ տեղափոխում ձեր ՅԲԳ-ից: Յուրաքանչյուր ՅԲԳ-ից պահանջվում է ունենալ անհետաձգելի տեղափոխման ծրագիր, որտեղ մանրամասներ են ներկայացվում, թե ովքեր են իրավասու, ինչ փաստաթղթեր են պահանջվում (առկայության դեպքում), ինչպես ՅԲԳ-ն կպաշտպանի գաղտնիությունը, և ինչպես է ՅԲԳ-ն մշակելու անհետաձգելի տեղափոխման հարցումները:

➤ **Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ շտապ տեղափոխման պահանջի համար:**

- ՅԲԳ-ներից չպետք է փաստաթղթեր պահանջեն և կարող են ընդունել բանավոր հայտարարություն: Փաստաթղթերի ներկայացման պահանջները կներառվեն ՅԲԳ-ի անհետաձգելի տեղափոխման ծրագրում:
- Եթե անհրաժեշտ են փաստաթղթեր, ձեր ընտրությամբ կարող եք տրամադրել հետևյալ տարբերակներից որևէ մեկը. կա՛մ ինքնավավերացում՝ օգտագործելով ([ՁԼ HUD-5382-ը](#)) **ԿԱՄ** փաստաթուղթ տրամադրել որևէ մեկից, ով ձեզ օգնել է ոտնձգության ընթացքում (աշխատող, գործակալ կամ տուժողի ծառայությունների մատուցման կամավոր, փաստաբան կամ բժշկական մասնագետ կամ հոգեկան առողջության մասնագետ) **ԿԱՄ** վարչական արձանագրություն (ներառյալ ոստիկանության հաղորդագրությունները և զսպող կարգադրությունները):

➤ **Ի՞նչ անել, եթե անհրաժեշտ է ոտնձգություն կատարողին վտարել իմ առանձնաբաժնից COVID-19-ի ժամանակ:**

- Ձեր VAWA իրավունքները դեռ պաշտպանված են COVID-19-ի ընթացքում: Եթե տան անդամը զբաղվում է հանցավոր գործունեությամբ, որն անմիջականորեն կապված է VAWA-ի հանցագործության հետ, ապա կապվեք ձեր ՅԲԳ-ի կամ սեփականատիրոջ հետ՝ քննարկելու ձեզ համար մատչելի տարբերակները:

➤ **Ո՞րն է ՅԲԳ-ի հետ շփվելու ամենաապահով և գաղտնի ձևն այն դեպքերում, երբ հանցագործը տան անդամ է:**

- Խնդրում ենք տեղեկացնել ՅԲԳ-ին ձեզ հետ շփվելու ամենաապահով ձևի մասին: ՅԲԳ-ին փոխանցած բոլոր տեղեկությունները պետք է պահվի խիստ գաղտնի:

➤ **Արդյոք սա նշանակո՞ւմ է, որ VAWA-ի զոհը չի կարող վտարվել կամ նրանց օգնությունը չի կարող դարացվել:**

- Ոչ, VAWA-ն չի արգելում ՅԲԳ-ին կամ սեփականատիրոջը վտարել կամ դադարեցնել օգնությունն այն խախտումների համար, որոնք սահմանված չեն VAWA-ի հանցագործությունների ցանկում: ՅԲԳ-ն կամ սեփականատերը պետք է առաջնորդվի նույն ստանդարտով, ինչպես մյուս վարձակալները: ՅԲԳ-ն/սեփականատերը կարող է դեռ վտարել ձեզ վարձակալության լուրջ կամ կրկնվող խախտումների համար, որը հիմնված չէ VAWA-ի վրա, կամ եթե ՅԲԳ-ն/սեփականատերը կարող է ցույց տալ, որ առկա է փաստացի և անմիջական սպառնալիք այլ վարձակալների կամ աշխատողների նկատմամբ:

➤ **Արդյոք ՅԲԳ-ն պարտավոր է ինձ տեղեկացնել VAWA-ի բնակարանային պաշտպանության մասին:**

- Այո, ձեր ՅԲԳ-ն պետք է ձեզ տեղեկացնի ձեր VAWA-ի պաշտպանության մասին ոչ ուշ այն ամսաթվից, երբ ձեզ մերժում են ընդունել կամ օգնություն ցուցաբերել, երբ ցուցաբերվում է օգնություն, և երբ ստանում եք օգնության դադարեցման մասին ծանուցում:

➤ **Ի՞նչ պետք է անեմ, եթե ես անտրամադիր ու ճգնաժամի մեջ եմ կամ ուզում եմ անմիջապես ինչ-որ մեկի հետ խոսել:**

- Ստանալու օգնություն ոչ անվտանգ, ոտնձգող հարաբերության համար՝ կարող եք զանգահարել ընտանեկան բռնության հարցերով ազգային թեժ գիծ 1-800-799-7233 կամ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար՝ 1-800-787-3224 (Հեռատիպ) հեռախոսահամարով կամ LOVEIS բառն ուղարկել 22522 հեռախոսահամարին:
- Սեռական ոտնձգությունների վերաբերյալ օգնության համար՝ կարող եք զանգահարել սեռական բռնության հարցերով ազգային թեժ գիծ (RAINN) 1-800-656-4673 հեռախոսահամարով:

➤ **Լրացուցիչ ռեսուրսներ.**

- Հետապնդումների վերաբերող օգնության համար այցելեք «Հետապնդումների գծով հանցագործությունների զոհերի ազգային կենտրոն»՝ <https://www.victimsofcrime.org/our-programs/stalking-resource-center>:
- Յուրաքանչյուր նահանգի համար տեղական կոալիցիաների ցուցակ գտնելու համար այցելեք Ազգային կոալիցիա ընդդեմ ընտանեկան բռնության՝ <https://ncadv.org/state-coalitions>:



Ծառայ ու թյ ու ններ և ռեսուրսներ

- **Աղետների գծով թեժ գիծ՝** - 1 (800) 985-5990 - դա ազգային թեժ գիծ է, որն ուղղված է անհապաղ ճգնաժամային խորհրդատվություն տրամադրել այն մարդկանց, ովքեր հուզական խանգարում են ապրում ցանկացած բնական կամ մարդու կողմից պատճառված աղետից:
- **Ընտանեկան բռնության հարցերով ազգային թեժ գիծ՝** - <https://www.thehotline.org> կամ 1 (800) 799-7233 կամ հեռատիպ՝ 1 (800) 787-3224 - դա գաղտնի թեժ գիծ է յուրաքանչյուրի համար, ում հանդեպ գործադրվում է ընտանեկան բռնություն, ով տեղեկատվություն է փնտրում կամ կասկածի տակ է դնում իրենց հարաբերությունների անառողջ կողմերը: Եթե չեք կարող անվտանգ խոսել հեռախոսով, LOVEIS բառը հաղորդագրության միջոցով ուղարկեք 1 (866) 331-9474 հեռախոսահամարին կամ այցելեք հետևյալ կայքն առցանց զրույց սկսելու համար:
- **211՝** - ցանկացած հեռախոսից զանգահարեք 211 հեռախոսահամարով կամ այցելեք 211.org և որոնեք ըստ փոստային դասիչի. դա թեժ գիծ է, որը կարող է ձեզ միացնել շտապ օգնությանը և ձեր համայնքի այլ օժանդակ ծառայություններին: Բոլոր զանգերը գաղտնի են, կարող են կատարվել

անանուն, և զանգահարողները կարող են պահանջել թարգմանության ծառայություններ 180 լեզուներով:

- **Գործազրկության ապահովագրություն՝** - www.usa.gov/unemployment - Իմացե՛ք՝ արդյոք իրավասու եք ստանալու գործազրկության նպաստ: Նոր դաշնային օրենքը գործազրկության նպաստներ է ապահովում ինքնազբաղվածների և անկախ ֆրիլանսերների համար, շաբաթական լրացուցիչ 600 ԱՄՆ դոլարի չափով գումար է ավելացնում և հավելյալ 13 շաբաթվա նպաստներ է ավելացնում ներկայումս նահանգի կողմից տրամադրվող շաբաթների քանակին: Բացի այդ, նահանգներին թույլատրվում է տրամադրել գործազրկության նպաստներ, որոնք կապված են COVID-19-ի հետ, օրինակ՝ երբ մարդը հեռանում է աշխատանքից հավանական վարակի վտանգի կամ ընտանիքի անդամի խնամքի պատճառով. գործատուն ժամանակավորապես դադարեցնում է գործողությունները COVID-19-ի պատճառով, ինչը նշանակում է, որ աշխատակիցները չեն կարող գնալ աշխատանքի կամ անձը կարանտինում է գտնվում, բայց սպասում է, որ կվերադառնա աշխատանքի կարանտինի ավարտից հետո:
- **Աշխատանքի և գործազրկության նպաստների որոնում՝** - www.careeronestop.org/LocalHelp/UnemploymentBenefits - Իմացե՛ք, թե ինչպես դիմել ձեր նահանգի գործազրկության նպաստի համար:
- **Վճարումներ կապված տնտեսական ազդեցության հետ՝** - <https://www.irs.gov/coronavirus/get-my-payment> - Իմացե՛ք, թե արդյոք իրավասու եք վճարումների համար կապված տնտեսական ազդեցության հետ, որի գումարային միջակայքը տատանվում է 1200 ԱՄՆ դոլարից մինչև 2400 ԱՄՆ դոլար (նույնիսկ ավելի շատ, եթե խնամքի տակ ունեք այլ անձ):
- **Հարկերի մասին անվճար նախապատրաստում՝** - <https://irs.treasury.gov/freetaxprep> - Ձեր հարկերը կազմելու համար ստացե՛ք անվճար օգնություն՝ տրամադրված վերապատրաստված կամավորների կողմից:
- **Համայնքային գործողությունների գործակալություն՝** - <https://communityactionpartnership.com/find-a-cap/> - Կապվե՛ք ձեր տեղական համայնքային գործողությունների գործակալության հետ և պարզե՛ք, թե ինչ ծառայություններ կարող են առաջարկել, օրինակ՝ վարձավճարների կամ կոմունալ վարձավճարների համար որպես շտապ օգնության վճարում:
- **Օգնություն հաշիվների գծով՝** - www.usa.gov/help-with-bills - Իմացե՛ք կառավարության ծրագրերի մասին՝ օգնելու վճարել տան էներգիայի հաշիվները և այլ ծախսերը:
- **Ժամանակավոր օգնություն կարիքավոր ընտանիքների համար (TANF)՝** - <https://www.benefits.gov/benefit/613>
- **Երեխայի խնամք՝** - <https://www.childcare.gov/covid-19> - Տրամադրում է տեղեկատվություն ձեր նահանգում առկա երեխաների խնամքի ռեսուրսների մասին, ներառյալ երեխայի խնամքի համար օգնություն գտնելը:
- **Անհապաղ աշխատատեղեր COVID-19-ի պատճառով՝** - <https://needajobnow.usnlx.com> - Կայքէջ է, որտեղ նշված են հաստատված գործատուների աշխատանքները, որոնք այժմ ցանկանում են լրացնել այդ հաստիքները: